

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՆԱՐԻՆԵ ՄԵԼՈՅԻ

«ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ» ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ԻԵ.00.01 «Կրոնի տեսություն և պատմություն (կրոնագիտություն)»
մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր,

պրոֆեսոր Ռ. Գ. Վարդանյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր,

պրոֆեսոր Է.-Մ. Ս. Շիրինյան

Պատմական գիտությունների թեկնածու

Գ. Ա. Զարությունյան

Առաջատար կազմակերպություն՝ ԶԶ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2015 թ. դեկտեմբերի 24-ին, ժամը 14⁰⁰-ին ԵՊՀ-ում գործող ԶԶ ԲՈՅ-ի Աստվածաբանության 068 մասնագիտական խորհրդում:
Հասցեն՝ ք. Երևան, 0025, Աբովյան 52, ԵՊՀ 6-րդ մասնաշենքի դահլիճ:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղնագիրն առաքված է 2015 թ. նոյեմբերի 23-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ



Ա. Յ. Բալյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Կանոնագիրք Հայոց» ժողովածուն հայ միջնադարյան մատենագրության արժեքավոր գանձերից է. «սուրբ գանձարան», «որ է դեղ եւ սպեղանիք ցաւազնելոց եւ մեղանչելոց», «արագ բժիշկս հոգւոց մերոց, մեղաց մերոց լուծիչ»:

Հայոց եկեղեցական իրավունքի այս բացառիկ հուշարձանն իր կազմավորումից ի վեր, որպէս պաշտոնական վավերագրերի ամբողջութիւն, գործածութեան մեջ է եղել Հայ Առաքելական Եկեղեցում կանոնակարգելով հոգևոր-եկեղեցական, ծիսական, դավանաբանական, տնտեսական, ամուսնաընտանեկան և տարաբնույթ այլ խնդիրներ:

Դավանաբանական, պաշտամունքային, ծիսական հարցերի մշակումը նպատակ էր հետապնդում բարեկարգել և հստակեցնել այս ոլորտներում առաջ եկած խնդիրները, ինչպէս նաև զերծ պահել Հայ Առաքելական Եկեղեցին ստար եկեղեցիների ազդեցությունից և համաձուլարար քաղաքականությունից: Սոցիալ-տնտեսական, ամուսնաընտանեկան, կենցաղային խնդիրների կանոնակարգումը կարգավորում էր ոչ միայն ներհամայնքային հարաբերությունները, այլև շփումներն ստարների՝ ինչպէս քրիստոնյաների, այնպէս էլ հրեաների, հեթանոսների, մահմեդականների հետ: Պետականության բացակայության ծանր պայմաններում «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն նպաստել է նաև հայ քաղաքացիական իրավունքի խնդիրների բարեկարգմանը:

Այս տեսանկյունից «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի մաս կազմող, IV-XV դարերում ձևավորված յուրաքանչյուր կանոնախմբում արտացոլված են իր ձևավորման ժամանակաշրջանին հուզող խնդիրները:

Չևավորվելով VIII դարում «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն հաջորդ հարյուրամյակների ընթացքում հարստացել է տասնյակ նոր կանոնախմբերով, ենթարկվել կառուցվածքային տարբեր ձևափոխությունների և միայն XVII դարում ստացել իր վերջնական տեսքը: «Կանոնագիրք Հայոց»-ի իննհարյուրամյա զարգացումն ու կազմավորումն արտացոլված են բազմաթիվ ձեռագիր մատյաններում, որոնք XX դարում Ս. Տիգրանյանի, Ն. Ալիևյանի և Վ. Հակոբյանի համակողմանի ուսումնասիրությունների արդյունքում բաժանվեցին մի քանի ձեռագրախմբերի: Հովհաննես Օձնեցու կազմած կանոնական ժողովածուի ընդլայնումը և ձևափոխությունները ներկայացնում են Կանոնագիրք ձեռագրերի Ա խումբը՝ 60, և Բ խումբը՝ 78-80 կանոնախմբերի շրջանակներում: Կանոնագիրք ձեռագրերի այս խմբերը, հիմքում ունենալով Հովհաննես Օձնեցու կազմած 24 կանոնախմբերից բաղկացած ժողովածուն, անցել են զարգացման տարբեր ուղիներ խմբագրվել, սրբագրվել են տարբեր ժամանակներում և տարբեր անձանց կողմից էլնելով տվյալ ժամանակի հրամայականից:

«Կանոնք», «Կանոնգիրք», «Կանոնագիրք», «Գիրք կանոնաց» և նմանատիպ անվանումներով մեզ են հասել հարյուրավոր ձեռագիր մատյաններում ընդօրինակված, կառուցվածքով և բովանդակությամբ միմյանց նման կամ միմյանցից էապես տարբերվող բազմաթիվ ժողովածուներ: XX դարի երկրորդ կեսին Վ. Հակոբյանը, հրատարակելով Հովհաննես Օձնեցի կաթողիկոսի (717-728 թթ.) կազմած կանոնական հավաքածուն և դրա հետագա ընդլայնումը ներկայացնող Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի 25-57 կանոնախմբերը, ժողովածուն կոչեց «Կանոնագիրք Հայոց»:

Սույն աշխատանքում ևս Կանոնագիրք ձեռագրերի Ա և Բ խմբերում ամփոփված կանոնական ժողովածուն պայմանականորեն կոչվում է «Կանոնագիրք Հայոց», իսկ սրանցից տարբերվող կանոնական մյուս ժողովածուները՝ պարզապես Կանոնգիրք կամ Կանոնագիրք:

«Կանոնագիրք Հայոց» ժողովածուի ձևավորման և զարգացման պատմության (Կանոնագիրք ձեռագրերի Ա և Բ խմբերի շրջանակներում) համակողմանի հետազոտությունը չափազանց կարևոր է Հայ Առաքելական Եկեղեցու պատմության, ծիսական, դավանաբանական խնդիրների, եկեղեցական, ինչպես նաև քաղաքացիական իրավունքի ուսումնասիրության համար: «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի խմբագրությունների ճշգրիտ թվագրումը հնարավորություն է ընձեռում նորովի անդրադառնալ պատմա-քաղաքական անցուդարձին, ուրվագծել հայ եկեղեցական ծեսի ու տոնական համակարգի ձևավորումն ու զարգացումը և դիտարկել տարաբնույթ այլ խնդիրներ, որոնք արժարժված են այս ժողովածուում:

ԱՏԵՆԱԽՈՍԻԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության նպատակն է ներկայացնել «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի կազմավորումը և հետագա խմբագրությունները Կանոնագիրք ձեռագրերի Ա և Բ խմբերի շրջանակներում:

Ուսումնասիրության շրջանակներից դուրս է «Կանոնագիրք Հայոց» ժողովածուում առկա առանձին կանոնախմբերի վավերականության, հեղինակային պատկանելության խնդիրների լուսաբանումը: Այս խնդիրներին անդրադարձել ենք այնքանով, որքանով որ դրանք նպաստել են «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի որևէ խմբագրության ժամանակի կամ խմբագրողի անձի բացահայտմանը:

Ձեռնամուխ լինելով «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի ձևավորման և զարգացման պատմության համակողմանի ուսումնասիրմանը՝ մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

- Վերահաստատել, որ Հովհաննես Օձնեցի կաթողիկոսի կազմած կանոնական ժողովածուն առավել անխաթար պահպանվել է Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբում՝ 1-24 կանոնախմբերի սահմաններում:

- Նորովի ներկայացնել Կանոնագիրք ձեռագրերի Ա և Բ խմբերի ձևավորման և հետագա զարգացման պատմությունը՝ հնարավորինս արտացոլելով այն փոփոխությունները, որ կրել է ժողովածուն հերթական խմբագրության ժամանակ:

- Յույց տալ Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի 57 կանոնախմբերից հետո իրականացված խմբագրությունները:
- Պարզել, թե ե՞րբ և ո՞վ է իրականացրել Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի երկրորդ խմբագրությունը:
- Քննել, զևորզ Երզնկացու մասնակցության հարցը «Կանոնագիրք Յայոց» ժողովածուի ձևավորման գործընթացում:
- Պարզել, թե ե՞րբ է ավարտվել «Կանոնագիրք Յայոց» ժողովածուի ձևավորումը և ինչ ընդգրկում են ունեցել Կանոնագիրք ձեռագրերի Ա և Բ խմբերի վերջնական տարբերակները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ատենախոսությունը շարադրելիս առաջնորդվել ենք պատմաբանասիրական քննական և համադրական վերլուծության մեթոդներով առկա ձեռագրական նյութի, հրապարակված սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների հետազոտության և վերլուծման ճանապարհով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Ժամանակագրական տեսակետից ատենախոսությունն ընդգրկում է VIII դարի առաջին կեսից (Յովհաննես Օձնեցու կողմից «Կանոնագիրք Յայոց» ժողովածուի ստեղծման ժամանակից) մինչև XVII դարն («Կանոնագիրք Յայոց» ժողովածուի վերջնական ձևավորումը) ընկած ժամանակաշրջանը: Մինչօձնեցիական կանոնական ժողովածուներին, Կանոնագիրք ձեռագրերի Ա և Բ խմբերի հետագա օգտագործմանն անդրադառնալիս կատարվել են որոշակի ժամանակագրական շեղումներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆ ՈՒ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մեզ հասած հարուստ ձեռագրական ժառանգության և սկզբնաղբյուրներում պահպանված տեղեկությունների համադրման միջոցով ատենախոսության մեջ համակողմանի ուսումնասիրվում է «Կանոնագիրք Յայոց» ժողովածուի առաջացումը և անցած զարգացման ուղին: Աշխատության գիտական նորույթներն են.

- Առկա տեսակետների քննության և Յովհաննես Օձնեցու նորահայտ երկերից քաղված տեղեկությունների հիման վրա հաստատվում է Յովհաննես Օձնեցի կաթողիկոսի կազմած «Կանոնագիրք Յայոց» ժողովածուի ընդգրկման սահմանները:
- Համակողմանի ներկայացվում է Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի շրջանակներում «Կանոնագիրք Յայոց» ժողովածուի զարգացումը:
- Նորովի է ներկայացվում Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի առաջացումն ու հետագա ընդլայնումը:

- Ճշգրտվում է, թե Ներսես Լամբրոնացու կամ Սկևռայի մեծ Կանոնագիրքը ձեռագրերի որ խմբին է պատկանել և քանի կանոնախումբ է ընդգրկել:

- Առաջին անգամ փորձ է արվում պարզել Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբում ընդգրկված «Կանոնք զգուշավոր քահանայից» կանոնախմբի հեղինակային պատկանելության հարցը:

- Պարզաբանվում է նաև Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի երկրորդ խմբագրողի անձն ու խմբագրման դրդապատճառները:

- Ճշգրտվում է Գևորգ Երզնկացու, Ազարիա Սասնեցու ունեցած դերը «Կանոնագիրք Յայոց» ժողովածուի խմբագրման գործում:

Ատենախոսությունն ունի նաև ճանաչողական և կիրառական նշանակություն: Աշխատանքի դրույթները կարող են օգտագործվել բուհական կրթական համակարգում «Կանոնագիտություն», «Յայ եկեղեցական իրավունքի պատմություն» դասընթացների շրջանակներում: Ուսումնասիրությունը կարող է ունենալ նաև գիտագործնական նշանակություն. վերջինիս դրույթների լույսի ներքո կարող են վերանայվել «Կանոնագիրք Յայոց» ժողովածուի ձևավորման և հետագա զարգացման վերաբերյալ շրջանառվող որոշ տեսակետներ:

ԱՏԵՆԱՒՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱԲՆԱՌԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Երևանի պետական համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի Աստվածաբանության ամբիոնի կողմից: Ուսումնասիրության կարևոր դրույթներն արտացոլված են հեղինակի հրատարակած երեք հոդվածներում:

ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ (ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՎԱՍՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ)

Ատենախոսությունը շարադրելու ընթացքում մեր կողմից օգտագործված նյութերը կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ ձեռագրեր, հրատարակված բնագրեր և ուսումնասիրություններ:

«Կանոնագիրք Յայոց» ժողովածուի զարգացման պատմությունը, խմբագիրների և որոշ կանոնախմբերի վավերականության և հեղինակային պատկանելության խնդիրների բացահայտման համար համակողմանի քննության ենք ենթարկել Կանոնագիրք ձեռագրերի տարբեր խմբերին պատկանող, ինչպես նաև այլաբնույթ 60-ից ավել գրչագրեր:

Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի 60 կանոնախմբերի շրջանակներում «Կանոնագիրք Յայոց» ժողովածուի զարգացումն ուսումնասիրելիս օգտվել ենք Մաշտոցյան Մատենադարանի (այսուհետ՝ ՄՄ) 6409 (XIII դ.), 8926 (XV դ.), 795 (1618 թ.), 2635 (1635 թ.), 6496 (1637 թ.), 2655 (XVII դ.), 2596 (XVII դ.), 3148 (XVII-XVIII դդ.), 3097 (XVII դ.) 9488 (1621 թ.), 9298 (XVII դ.), 8158 (1635 թ.), 3706 (1636 թ.), 4403 (1647 թ.), 4631 (1649 թ.),

5782 (1651 թ.), 7580 (1651 թ.), 7317 (1652թ.), 3291 (1652 թ.), 2883 (1665 թ.), 3099 (XVII դ.), 3097 (XVII դ.), 449 (1757 թ.), 3297 (1780 թ.), 3059 (1870 թ.), 3065 (XVIII դ.) թվահամարների ձեռագրերից, ինչպես նաև Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի թիվ 131 ձեռագրի (1098 թ.) լուսանկարչական պատճենից (ՄՍ, Դրսի լուսանկարների հավաքածու, N^o 203):

Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի կազմավորումն ու հետագա ընդլայնումը ներկայացրել ենք ըստ ՄՍ 7615 (1352 թ.), 10137 (1389 թ., XV դ.), 8964 (XV դ.), 2676 (XVII դ.), 656 (1661 թ.), 8380 (1602 թ.), 783 (1605 թ.), 8006 (1611, 1680 թթ., XVIII, XIX դդ.), 5148 (1618 թ.), 10311 (1637 թ.), 3368 (1639 թ.), 10682 (1643 թ.), 654 (1671 թ.), 8938 (1685 թ.), 2677 (1697 թ.), 660 (XVII դ.), 3098 (XVII դ.), 3276 (XVII դ.), 3544 (XVII դ.), 8236 (XVII դ.), 9769 (XVII դ.), 10953 (XVII դ.), 9513 (XVII դարի վերջ-XVIII դարի սկիզբ), 646 (1731 թ.), 3788 (1852 թ.) թվահամարի գրչագրերի:

Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբում առկա «Կանոնք զգուշաւոր քահանայից», «Ձգուշութեամբ սպասաւորելոյ Սուրբ Խորհրդոյն» և «Կասն քահանայագործութեան կարգաց պատրաստութիւն» հույժ հետաքրքրական բնագրերը ներկայացված են հավելվածում:

Կանոնագիրք ձեռագրերի այլ խմբերի ուսումնասիրությունն իրականացրել ենք ըստ ՄՍ 659 (1368 թ.), 839 (XIV դ.), 3562 (1597, 1599 թթ.), 5984 (XVI դ.), 651 (XVII դ.), 648 (XVII դ.), 9818 (1728 թ.), 3100 (1800 թ.), 2936 (1812 թ.) գրչագիր մատյանների:

ՄՍ 3919 (XVII դ. մինչև 1660 թ.) թվահամարի գրչագրում պահպանված Գևորգ Ակևաջու 1301 թ. կազմած Տոնացույցի միջոցով մատենագրական կարևոր և հետաքրքիր փաստեր ենք բացահայտել Ներսես Լամբրոնացու կամ Ակևայի մեծ Կանոնագրի վերաբերյալ:

ՄՍ 2678 (XIV դ., 1426-1476 թթ.) և 1242 (XV դ.) ձեռագրերի հիման վրա էլ անդրադարձել ենք Գևորգ վարդապետի անվամբ պահպանված կանոնական երկու երկերի:

Ուսումնասիրության առանձին խնդիրների վերաբերյալ արժեքավոր նյութեր ենք քաղել նաև ՄՍ համառոտ և ընդարձակ ձեռագրացուցակներից, Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց, Անկյուրիայի Կարմիր, Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքերի, Վիեննայի և Վենետիկի Մխիթարյան մատենադարանների ձեռագրացուցակներից, ինչպես նաև հիշատակարանների տպագիր ժողովածուներից:

Հայոց կանոնական ժողովածուներին, դրանց խմբագիրներին և խմբագրությունների ժամանակին առնչվող տեղեկություններ քաղել ենք Ուխտամեսի, Սամվել Անցու, Կիրակոս Գանձակեցու Պատմություններից, Անանիա Մոկացու, Հովհաննես Օճնցու, Մխիթար Գոշի, Վարդան Արևելցու, Մովսես Երզնկացու երկերից, Գևորգ Ակևաջու՝ անանուն վարքագրի հեղինակած Կարբից և դրա հայսնավորքային տարբերակից:

«Կանոնագիրք Հայոց» ժողովածուի կազմավորման և հետագա զարգացման, առանձին կանոնախմբերի վավերականության և հեղինակային պատկանելիության խնդիրներին առավել համակողմանի ուսումնասիրողներն սկսել են անդրադառնալ XIX դարի երկրորդ կեսից:

Հայոց Կանոնագրքի և դրանում ընդգրկված որոշ կանոնախմբերի պատմաբանասիրական, աղբյուրագիտական քննությունն իրականացրել են Յ. Գաթրճյանը (անտիպ), Յ. Տաշյանը, Ա. Մխիթարյանը, Ն. Մելիք-Թանգյանը, Ա. Ղևոնդյանը, Ն. Ալիևյանը: Բացառությամբ Ն. Ալիևյանի, մյուս ուսումնասիրողները խոսում են առհասարակ Հայոց Կանոնագրքի մասին չտարբերակելով դրա զանազան խմբագրությունները:

Եվ միայն XX դարասկզբին Ա. Տիգրանյանը, նկատելով նույն անվանը հանդես եկող կանոնական ժողովածուների տարբերությունները, գատորոշում է դրանք «ամբողջական» և «ոչ ամբողջական» բնորոշմամբ՝ ամբողջական համարելով Հովհաննես Օձնեցու (717-728 թթ.) կազմած ժողովածուն և հետագայում դրա ընդլայնված տարբերակները՝ մեզ այսօր հայտնի Ա և Բ ձեռագրախմբերը: Ա. Տիգրանյանն առաջինն էր, ով ուրվագծեց «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի ձևավորման և հետագա զարգացման պատմությունը՝ հիմնավորելով, որ Հովհաննես Օձնեցու կազմած ժողովածուն բաղկացած է եղել 24 կանոնախմբերից և մեզ հասել Կանոնագիրք ձեռագրերի Բ (Ն. Ալիևյանի, Վ. Հակոբյանի բաժանմամբ Ա) խմբում:

Այս տեսակետը հետագայում հաստատեց նաև Ն. Ալիևյանը՝ առաջ քաշելով ժողովածուի զարգացման վերաբերյալ նոր վարկածներ:

Ա. Տիգրանյանի, Ն. Ալիևյանի առաջ քաշած տեսակետները XX դարի երկրորդ կեսին հիմնավորեց և իր ուսումնասիրություններով ամբողջացրեց Վ. Հակոբյանն իր «Կանոնագիրք Հայոց» երկհատոր աշխատությունում: Վ. Հակոբյանը ոչ միայն կազմեց Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի 57 կանոնախմբերի քննական բնագիրը, այլև հնարավորինս ուրվագծեց «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի ձևավորման և հետագա զարգացման պատմությունը՝ նոր էջ բացելով հայ կանոնագիտական մտքի պատմության մեջ: Վ. Հակոբյանի կատարած մանրակրկիտ աշխատանքն այսօր էլ մնում է անզերազանցելի և հնարավորություն է ընձեռում ուսումնասիրողներին նորովի անդրադառնալ «Կանոնագիրք Հայոց»-ին առնչվող զանազան հարցերի պարզաբանմանը, ինչպես նաև առաջարկել նոր տեսակետներ դրա կազմավորման և խմբագրությունների վերաբերյալ:

Այսպես՝ Ա. Մարտիրոսյանն իր մենագրության մեջ առաջադրում է նոր վարկածներ Հայոց Կանոնագրքի ձևավորման և V-VIII դարերում իրականացված խմբագրությունների վերաբերյալ՝ կապելով «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի առաջացումը Հովհան Մայրավանեցու (շ. 572-650 թթ.) գործունեության հետ:

Մեկ այլ տեսակետ է առաջ քաշում Ա. Հակոբյանը: Որպես Հովհաննես Օձնեցու Կանոնագրքի օրինակ դիտելով ՄՄ 659 և ՄՄ 657 թվահամարի գրչագրերում պահպանված Կանոնագրքի «մայր» տարբերակը՝ նա ամբողջովին վերածնունդ է ժողովածուի զարգացման պատմությունը:

V դարի Հայոց կանոնական ժողովածուի, թարգմանական որոշ բնագրերի, ինչպես նաև Հովհաննես Օձնեցու կազմած ժողովածուի և բյուզանդական կանոնական ժողովածուների աղբյուրներին առնչվող մի

շարք հարցերի պարզաբանման համար մեզ համար կարևոր են եղել Մ. -Է. Շիրինյանի և Գ. Մուրադյանի ուսումնասիրությունները:

Հայոց Կանոնագրքի նախածնեցիական խմբագրությունների ընդհանուր պատկերը, ինչպես նաև տոմարական տարբեր հարցերի վերաբերյալ հատվածները շարադրելիս հենվել ենք Ռ. Վարդանյանի մենագրությունների վրա, որտեղ հեղինակն արժեքավոր տեղեկություններ է հաղորդում ոչ միայն հայոց տոմարական տարվա, Տոնացույցի զարգացման, այլև տարբեր կանոնախմբերի վավերականության, թարգմանության ժամանակների, հեղինակների վերաբերյալ:

Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի խմբագրության գործում Գևորգ Սկևազու և Գևորգ Երզնկացու ունեցած դերի ճշգրտման հարցում օգտագործել ենք նաև Վ. Հակոբյանի դոկտորական ատենախոսությունը և դրա վերաբերյալ Լ. Խաչիկյանի ընդդիմախոսությունը, Բ. Կյուլեսերյանի հոդվածը և Զ. Քյուրտյանի աշխատությունը: XIII-XIV դարերում տիրող պատմա-քաղաքական իրադարձությունները ներկայացնելիս մեծապես օգտվել ենք Լ. Տեր-Պետրոսյանի «Խաչակիրները եւ հայերը» մեծածավալ մենագրությունից:

Աշխատանքում առհասարակ պատմական, դավանաբանական խնդիրներին անդրադարձել ենք այնքանով, որքանով դրանք նպաստել են ատենախոսության մեջ արծարծվող այս կամ այն հարցի լուսաբանմանը: Այս առումով մեզ համար կարևոր են եղել Մ. Օրմանյանի, Ղ. Ալիշանի, Ա. Օղլուգյանի, Մ. Պապյանի ուսումնասիրությունները:

Ատենախոսությունը շարադրելիս օգտվել ենք նաև Լ. Սարգսյանի աշխատությունից, Ա. Բոզոյանի հոդվածներից և վերջինիս՝ Ա. Մարտիրոսյանի վերոնշյալ աշխատությանը նվիրված գրախոսությունից, Զ. Էյնաթյանի ուսումնասիրությունից:

Այսպիսով՝ եղած հարուստ ձեռագրական նյութը, հրատարակված և անտիպ սկզբնաղբյուրները, ինչպես նաև առկա ուսումնասիրությունները հնարավորություն են ընձեռում համակողմանի ուսումնասիրել «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի առաջացումը և հետագա խմբագրությունները՝ Կանոնագիրք ձեռագրերի Ա և Բ խմբերի շրջանակներում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից (152 էջ), հավելվածից (20 էջ):

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆՈՒՄ հիմնավորված է ընտրված թեմայի գիտական նշանակությունն ու արդիականությունը, նպատակն ու խնդիրները, աշխատանքի մեթոդաբանությունը, ներկայացված է աշխատանքի գիտական նորույթը, տրված է օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության տեսությունը:

Առաջին գլուխը՝ «ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ» ժՈՂՈՎԱԾՈՒԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԵՎ ՀԵՏԱԳԱ ԸՆԴՆԱՅՆՈՒՄԸ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ԶԵՈՎԱԳՐԵՐԻ Ա ԽՄԲԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ», բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին ենթազվխում՝ «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի առաջացումը. Հովհաննես Իմաստասեր Օձնեցի», անդրադարձ է կատարված մինչօձնեցիական կանոնական ժողովածուների վերաբերյալ ուսումնասիրողների կարծիքներին, ապա առկա ուսումնասիրությունների քննության և ի հայտ եկած նոր փաստերի հիման վրա ներկայացված է «Կանոնագիրք Հայոց»-ի կազմավորումը, ինչպես նաև նոր ձևավորված ժողովածուի կառուցվածքն ու ընդգրկման սահմանները:

«Կանոնագիրք Հայոց» ժողովածուն կազմավորվել է VIII դարում (ըստ Սամվել Անեցու տեղեկության 721 կամ 723 թթ.) Հովհաննես Օձնեցի կաթողիկոսի նախաձեռնությամբ: Ելնելով ժամանակի հրամայականից՝ Հովհաննես Օձնեցին կազմում է կանոնական մի ժողովածու՝ վերախմբագրելով և վերածնելով մինչ այդ կիրառվող կանոնական ժողովածուն կամ ժողովածուները:

Քննության ենթարկելով Հովհաննես Օձնեցու կանոնական ժողովածուի ձևավորման վերաբերյալ շրջանառվող տեսակետները (ի մասնավորի Ա. Հակոբյանի առաջ քաշած վարկածը)՝ հաստատվում է, որ Հովհաննես Օձնեցու կազմած կանոնական ժողովածուն առավել անաղարտ պահպանվել է Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի 1-24 (Ա-ԻԴ) կանոնախմբերի սահմաններում:

Երկրորդ ենթազվխում՝ «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի հետագա ընդլայնումը VIII դարի երկրորդ կեսից մինչև XI դարի առաջին կեսն ընկած ժամանակահատվածում», ուրվագծված է «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի ընդլայնման պատկերը 25-41 (ԻԵ-ԽԱ) կանոնախմբերի սահմաններում:

Պատմական վկայությունների, ձեռագրական վաղ տվյալների բացակայությամբ պայմանավորված՝ այսօր դժվար է ցույց տալ, թե այդ կանոնախմբերը երբ և ուն կողմից են ավելացվել, կամ հերթական կանոնախումբը առանձի՞ն, թե՞ մի քանի այլ կանոնախմբերի հետ է ընդգրկվել «Կանոնագիրք Հայոց» ժողովածու:

Հավանական է համարվում, որ Հովհաննես Օձնեցուց հետո «Կանոնագիրք Հայոց» ժողովածուին առաջինն ավելացվել է 25-րդ (ԻԵ) համարի ներքո գտնվող Սիոն կաթողիկոսի կամ Պարտավի ժողովրդ կանոնախումբը: Իսկ սրանից հետո մուծված կանոնախմբերի մոտավոր սահմանները հնարավոր է գատորոշել Անանիա Մոկացի կաթողիկոսի թղթերում առկա կանոնական քաղվածքների հիման վրա: Իր թղթերում Անանիա Մոկացին մի շարք կանոնախմբերի հետ մեկտեղ մեջբերումներ է կատարել Երկրորդ Նիկիական կանոնախմբից, սակայն միևնույն ժամանակ չի օգտագործել իր արժարժած թեմաներին սերտորեն առնչվող Մակար Երուսաղեմացու կանոնախումբը, ինչն էլ հիմք է տալիս կարծելու, որ Անանիա Մոկացու ժամանակ՝ X դարի 40–60-ական թվականներին, Կանոնագրքում եղել է Երկրորդ Նիկիական կանոնախումբը 34-րդ համարով և բացակայել է 39 (ԼԹ)-րդ համարի տակ դրված Մակար Երուսաղեմացու կանոնախումբը: Հետևաբար, հավանական է, որ այդ ժամանակ «Կանոնագիրք Հայոց»-ը եզրափակվել է 34-38-րդ (ԼԴ-ԼԸ) կանոնախմբերից որևէ մեկով:

Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի 131 և ՍՍ 3148 թվահամարի Կանոնագրերի, ինչպես նաև Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի նախնական տարբերակը ներկայացնող գրչագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Կանոնագիրք ձեռագրերի Ա խումբը ձեռագրերի Բ խմբի ձևավորման ժամանակ (1056-1059 թթ.) ընդգրկել է 41 (հսվ) կանոնախումբ՝ եզրափակվելով Յովհան Մանդակունու «Բան Կանոնական» բնագրով:

Երրորդ ենթազխում՝ «Կանոնագիրք Յայոց» ժողովածուի ձեռագրերի Ա խմբի XI դարի երկրորդ կեսի (մինչև 1098 թթ.) խմբագրությունը», ներկայացված է «Կանոնագիրք Յայոց» ժողովածուի հետագա ընդլայնումը 42-57 (հԲ-ԾԷ) կանոնախմբերի սահմաններում:

XI դարի առաջին կեսից (1056-1059 թթ.) Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի ձևավորումից հետո՝ «Կանոնագիրք Յայոց» ժողովածուն շարունակում է ընդարձակվել և զարգանալ միմյանցից անկախ երկու ուղղություններով՝ Կանոնագիրք ձեռագրերի Ա և Բ խմբերի շրջանակներում:

«Կանոնագիրք Յայոց» ժողովածուն Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբում XI դարի վերջին արդեն իսկ բովանդակում էր 57 կանոնախմբեր: Այդ է փաստում Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի հնագույն՝ 1098 թ. (Նոր Ջուղա, թիվ 131) Կիլիկիայում ընդօրինակված գրչագիրը: Արժեքավոր այս ձեռագրի բովանդակության և առարկայական ցանկերի համադրության ու ուսումնասիրության, ինչպես նաև գրչագրի հիշատակարանում պահպանված տեղեկությունների հիման պարզ է դառնում, որ ձեռագրերի Ա խմբին 42-57 (հԲ-ԾԷ) կանոնախմբերը ավելացվել են մինչև 1098 թ.: մինչև այս գրչագրի ընդօրինակությունը: Ինչև էլ իր հերթին ապացուցում է, որ այս ձեռագրի գրիչ Յովհաննեսը, ինչպես նաև Յովհաննա անապատի վանահայր Սելխտեն և փոխանորդ Գրիգորիսը չեն հավելել նշված կանոնախմբերը, հետևաբար նրանք չեն իրականացրել «Կանոնագիրք Յայոց» ժողովածուի հերթական խմբագրությունը:

Չորրորդ ենթազխում՝ «Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի հետագա ընդլայնումը XI դարի վերջից մինչև XVII դար», քննության են ենթարկված այն բոլոր խմբագրությունները, որոնք իրականացվել են 1098 թվականից հետո:

XI դարի վերջից հետո «Կանոնագիրք Յայոց» ժողովածուի հետագա ընդլայնումը ձեռագրերի Ա խմբի շրջանակներում ընթացել է մի քանի ուղղություններով: Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբին պատկանող բազմաթիվ գրչագրերը տարբերվում են միմյանցից 57 (ԾԷ)-րդ՝ Յովհան Մանդակունու «Կոչումն ապաշխարութեան կանոնախմբից հետո բովանդակված կանոնախմբերով և ներկայացնում են ձեռագրերի Ա խմբի տարբեր ենթախմբերը:

Դարեր շարունակ հայ մատենագիրներն, օգտվելով «Կանոնագիրք Յայոց»-ից, իրենց երկերում մեծ և փոքր մեջբերումներ են կատարել այս շատ կարևոր ժողովածուից:

«Կանոնագիրք Յայոց»-ի տարբեր կանոնախմբերի օգտագործման ինքնատիպ մի օրինակ է ՍՍ 3919 թվահամարի ձեռագրում ընդօրինակված Տոնացույցը, որը, ինչպես պարզվեց

ուսումնասիրությունների ընթացքում, հեղինակել է XIII դարի կիլիկյան նշանավոր մատենագիր Գևորգ Սկևռացին: Նա յուրաքանչյուր ամսվա տոնացուցային նշումներից առաջ «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի տարբեր կանոնախմբերի կանոններից քաղված մեջբերումներով հիմնավորում է տվյալ ամսվա տոները և պահոց օրերը: Այս մեջբերումներից ուշագրավ են չորսը, որոնց դեպքում նշվում է թե՛ կանոնների ընդհանուր համարները և թե՛ դրանց Ներսես Սկևռացու (Լամբրոնացու) կամ Սկևռայի մեծ Կանոնգրքից վերցված լինելը: Գևորգ Սկևռացու վկայակոչած ՌՅԺԸ, ՌՅԻԳ, ՌՅԻԵ, ՌՅԻԶ ընդհանուր կարգահամարների համեմատությունը Կանոնագիրք ձեռագրերի տարբեր ենթախմբերի զրչագրերի հետ ցույց տվեց, որ Սկևռայի մեծ Կանոնագրքի ընդհանուր համարները համընկնում են ՄՄ 6496 և 8926 թվահամարի ձեռագրերի համապատասխան կանոնախմբերի կարգահամարներին: Այս ձեռագրերը պատկանում են Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի այն ենթախմբին, որտեղ Հովհան Մանդակունու «Կոչումն ապաշխարության» երկից հետո անհայտ խմբագիրը կամ խմբագիրները 58-րդ (ԾԸ) համարի ներքո ավելացրել են «Կանոնք տեսռն Սիմեուվմի՛ Աղուանից կաթողիկոսի» կանոնախումբը: Գևորգ Սկևռացու Տոնացույցում պահպանված Հովհաննես Երուսաղեմացու, Սեբերիանոսի, Դիոնիսիոս Արիսապագոցու և Մանուելի կանոնախմբերի վերը նշված ընդհանուր կարգահամարների համընկնումն այս ենթախմբի ձեռագրերին թույլ է տալիս ասելու, որ «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի հերթական խմբագրությունը տեղի է ունեցել XI դարի վերջից (1098 թ.-ից հետո) XII դարի երկրորդ կեսն ընկած ժամանակահատվածում:

«Կանոնագիրք Հայոց» ժողովածուի հաջորդ խմբագրությունն են ներկայացնում ՄՄ 9488, 8158, 3706, 4403, 4631, 5782, 7317, 5894, 2883, 3099, 3097, 449, 3297, 3059, 3065 թվահամարի ձեռագրերը: 1416 թվականից հետո մինչև XVII դարի առաջին կեսն (մինչև 1651 թ.) ընկած ժամանակամիջոցում իրականացված այս խմբագրության ժամանակ «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն (57 կանոնախմբերի սահմաններում) համալրվել է «Կանոնք Երրորդ Բարսղի Կեսարացոյ, Գլուխ ՀԳ (= ՀԷ)», «Կանոնք Յոհան Ոսկեբերան վարդապետի. Գլուխ ԵԳ» կանոնախմբերով և Հակոբ Դրիմեցու «Յաղագս պսակի ամուսնացելոյ» և «Յաղագս ազգականութեանն» բնագրերով: XVII դարում (մինչև 1651 թ.) այդ կանոնախմբերը, համապատասխան մասնավոր և ընդհանուր համարակալմամբ, ընդգրկվել են ժողովածուի բովանդակության (Հակոբ Դրիմեցու երկերը 1 ընդհանուր համարի ներքո) և առարկայական ցանկերում: Այս խմբագրության արդյունքում էլ «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի սահմաններում ստանում է իր վերջնական տեսքը՝ ընդգրկելով Ա-Կ (1-60) կանոնախմբեր: «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի այս վերջին խմբագրությունն են ներկայացնում ՄՄ 7580 և 3291 զրչագրերը:

Երկրորդ գլուխը՝ «ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ԶՆՈՎՈՐԵՐԻ Բ ԽՄԲԻ ԿԱԶՄՎՈՐՈՒՄՆ ՈՒ ՀԵՏԱԳԱ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ», բաղկացած է չորս ենթաբաղկից:

Առաջին ենթազխում՝ «Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի սկզբնավորումը», քննվել է 1056-1059 թթ. Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի նախնական տարբերակի առաջացման ու բովանդակության հարցը:

Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբից մեզ են հասել բազմաթիվ գրչագրեր: Դրանցից ՄՄ 656 և 646 թվահամարի ձեռագրերը ներկայացնում են «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի այդ տարբերակի նախնական օրինակը: Քննության առնելով այս և Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբին պատկանող և նախնական տարբերակին մասամբ հարող այլ Կանոնագիրք մատյաններ՝ պարզել ենք, որ Կանոնագիրք ձեռագրերի Բ խումբը ձևավորվել է Ա խմբի 41 (ԽԱ) կանոնախմբերի հիման վրա: Անհայտ խմբագիրը կամ խմբագիրները վերադասավորել են այս 41 կանոնախմբերը՝ հիմք ընդունելով դրանց բովանդակային և հեղինակային առանձնահատկությունները, և հավելել ձեռագրերի Ա խմբում բացակայող «Սրբոյն Եղիշայի ի կանոնաց գրոց. Գլուխ մի» բնագիրը: Այս վերադասավորման և խմբագրման հետևանքով «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի նախնական տարբերակում ընդգրկել է 43 կանոնախմբեր՝ բաշխված ցանկի 40 վերնագրերի միջև:

Երկրորդ ենթազխում՝ «Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի Գևորգ Սկևռացու իրականացրած խմբագրությունը», քննության է ենթարկվել Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի երկրորդ խմբագրողի անձի, խմբագրության ժամանակի, ավելացված կանոնախմբերի թվաքանակի խնդիրը, ինչպես նաև վերլուծվել է «Կանոնք զգուշաւոր քահանայից» բնագրի հեղինակային պատկանելիության հարցը:

Համադրելով մատենագրական վկայություններն ու այս ենթախմբին պատկանող Կանոնագիրք ձեռագրերի կառուցվածքային առանձնահատկությունները կարծում ենք, որ Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի երկրորդ խմբագրությունն իրականացվել է XIII դարում կիլիկյան մատենագիր, քաղաքական և եկեղեցական գործիչ Գևորգ վարդապետ Սկևռացու կողմից: Վերջինս Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի նախնական տարբերակին հավելել է 41 (իր խմբագրության արդյունքում արդեն 47)-78 կանոնախմբերը: Գևորգ Սկևռացու ավելացրած կանոնախմբերում կարմիր թելի նման ձգվում է դրանց ներմուծողի հակաքաղկեդոնական կողմնորոշումը և Հայ եկեղեցու դավանանքին ու ծեսին հավատարիմ մնալու հաստատակամությունը:

Հիմք ընդունելով Գևորգ Սկևռացու աշակերտ Մովսես Երզնկացու և անանուն վարքագրի հաղորդած տեղեկությունները՝ բնագրային համեմատության և աղբյուրների վերհանման միջոցով փաստում ենք, որ Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբում պահպանված «Կանոնք զգուշաւոր քահանայից», «Զգուշութեամբ սպասաւորելոյ Սուրբ խորհրդոյն» և «Վասն քահանայազորութեան կարգաց պատրաստութիւն» կանոնախմբերի հեղինակը Գևորգ Սկևռացին է:

Երրորդ ենթազխում՝ «Գևորգ Երզնկացին և նրա կատարած աշխատանքները», անդրադարձ է կատարվում XIV-XV դարերի մատենագիր, ուսուցչապետ Գևորգ վարդապետ Երզնկացու՝

«Կանոնագիրք Հայոց» ժողովածուի խմբագրության գործուն ունեցած մասնակցության հարցին:

Ուսումնասիրելով Պետրոս Երզնկացու աշակերտ Հակոբ Ղրիմեցու հիշատակարանը բովանդակող Անկյուրիայի Կարմիր վանքի թիվ 43 և ՄՍ 3788, ինչպես նաև այս ենթախմբին պատկանող այլ Կանոնագիրք ձեռագրերի ցույց ենք տալիս, որ Կանոնագիրք Հայոց ժողովածուի հերթական խմբագրմանը Պետրոս Երզնկացին չի մասնակցել: Նա XIV դարում (մինչև 1392 թ.) որպես ընդօրինակող պարզապես ընդօրինակել է մի Կանոնագիրք՝ օգտվելով ձեռագրերի Բ խմբի՝ արդեն իսկ գոյություն ունեցող երկու ենթախմբերի գրչագրերից: Իր աշակերտ Հակոբ Ղրիմեցու թողած տեղեկությունն էլ վերաբերում է նրա կատարած ընդօրինակությանը, որով հիմք է դրվել «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի մի նոր «արիեստական» ենթախմբի առաջացմանը:

Չորրորդ ենթաբաժինում՝ «Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի հետագա՝ մինչև XVII դարի կեսն իրականացված սրբագրումներն ու խմբագրումները», ներկայացված են «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի հետագա սրբագրումներն ու խմբագրությունները Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի շրջանակներում:

«Կանոնագիրք Հայոց» ժողովածուի՝ Պետրոս Սկևռացու խմբագրած տարբերակը հետագայում՝ մինչև XVII դարի երկրորդ կեսն ընդլայնվել է և սրբագրվել ենթարկվելով մի շարք փոփոխությունների, որոնք արտացոլված են՝ ՄՍ 10682, 654, 2677, 3544, 3098, 10953 գրչագրերում:

«Կանոնագիրք Հայոց» ժողովածուն 78 կանոնախմբերի սահմաններում մինչև 1643 թ. սրբագրվել է: Սրբագրական աշխատանքներն իրականացրած անհայտ սրբագրողը կամ սրբագրողները վերահամարակալել են «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի 78 (ՅԸ) կանոնախմբերի կանոնները, մինչ այդ ցանկ չունեցող կանոնախմբերին ավելացրել են ցանկեր, իսկ արդեն առկա ցանկերը վերասրբագրել են:

Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի այս ենթախմբի ՅԸ (78) կանոնախմբերին XIV դարից XVII դարն (մինչև 1643 թ.) ընկած ժամանակահատվածում կցվել են Ներսես Շնորհալու «Վասն աստիճանաց ազգականութեան», Հակոբ Ղրիմեցու «Յաղագս պսակի» և «Յաղագս ազգականութեան» բնագրերը (ըստ ՄՍ 654 ձեռագրի)՝ առանց ընդհանուր և մասնավոր համարակալման:

ԵԶՐԱՎԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒԲՄ ամփոփված են ատենախոսության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները:

1. VIII դարում (ըստ Սամվել Անեցու տեղեկության 721 կամ 723 թթ.) Հովհաննես Իմաստասեր Օձնեցի կաթողիկոսը, վերախմբագրելով և վերածնելով մինչ այդ կիրառվող կանոնական ժողովածուն կամ ժողովածուները, կազմել է «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն: Հովհաննես Օձնեցու կազմած կանոնական ժողովածուն առավել անխաթար պահպանվել է Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբում՝ 1-24 կանոնախմբերի սահմաններում:

2. «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն (ծեռագրերի Ա խումբ) VIII դարի կեսից հետո իրականացված խմբագրությունների արդյունքում ընդարձակվել է ներառելով նորանոր կանոնախմբեր, և արդեն XI դարի առաջին կեսին մինչև 1056-1059 թթ. ընդգրկել խԱ (41) կանոնախմբեր: Այս խմբագրությունների ժամանակ ավելացվել են իԵ-խԱ (25-41) կանոնախմբերը՝ «ԻԵ. Կանոնք Սիոնի Հայոց կաթողիկոսի... խԱ. «Յովհաննու Մանդակունույ Հայոց կաթողիկոսի և թարգմանչի աշակերտ եղելոյ սրբոյն Սահակայ Մեծի հայրապետի Հայոց կաթողիկոսի Բան կանոնական. Գլուխ Ա»:

3. Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի հերթական խմբագրությունը տեղի է ունեցել 1056-1059 թվականներից հետո մինչև 1098 թվականը: Այս խմբագրության ժամանակ անհայտ խմբագիրը կամ խմբագիրները «Կանոնագիրք Հայոց» ժողովածուին ավելացրել են խԲ-ԾԷ (42-57) կանոնախմբերը՝ «խԲ. Կանոնք սուրբ ժողովոյն, որ ժողովեցան ի Թեոդոսուպալիս, որ այժմ կոչի Կարնոյ քաղաք. Գլուխք Թ. ... ԾԷ. Կոչունն ապաշխարութեան, զոր ասացեալ է տեառն Յովհաննու Մանդակունույ Հայոց կաթողիկոսի»: Այդ 16 կանոնախմբերն ընդգրկվել են ժողովածուի բովանդակության ցանկում, սակայն առարկայական ցանկում չեն արտացոլվել:

4. XI դարի վերջից (1098 թ.-ից հետո) XII դարի երկրորդ կեսն ընկած ժամանակահատվածում իրականացված խմբագրության ժամանակ անհայտ խմբագիրը կամ խմբագրողները Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի 57 կանոնախմբերին ավելացրել են «Կանոնք տեառն Սիմեոնովի՝ Աղուանից կաթողիկոսի յետ կործանմանն Ներսեսի Աղուանից կաթողիկոսի, որ վասն Քաղկեդոնին խորհելոյ եւ շփոթելոյ զԱղուանք, մերժեցաւ ձաղանաւք ընդ ձեռն Եղիայի՝ Հայոց կաթողիկոսի եւ ժողովոյն Աղուանից» կանոնախումբը, որն համարակալվել է ԾԸ (58) հերթական համարով, իսկ կանոնները «Ա/ՌՅԻԹ - Է/ՌՅԼԵ» մասնավոր և ընդհանուր կարգահամարներով: Սրանից զատ խմբագիրը կամ խմբագիրները ձևափոխել են «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի բովանդակության և առարկայական ցանկերն ընդգրկելով դրանց մեջ նաև իրենց կողմից ավելացված Սիմեոն Աղվանից կաթողիկոսի կանոնախումբը:

Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի այս խմբագրությունն են ներկայացնում ՄՄ 6409, 8926, 795, 2635, 6496, 2655, 2596 թվահամարի գրչագրերը:

5. Գևորգ Սկևռացու կազմած Տոնացույցում պահպանված Հովհաննես Երուսաղեմացու, Սեբեթիանոսի, Դիոնիսիոս Արիսպագացու և Մանուելի կանոնախմբերի ընդհանուր կարգահամարների՝ ՌՅԺԸ, ՌՅԻԳ, ՌՅԻԵ, ՌՅԻԶ, համընկնումը ՄՄ 6496 և 8926 թվահամարի ձեռագրերի համապատասխան կանոնախմբերի կարգահամարներին փաստում է, որ Ներսես Լամբրոնացու Կանոնագիրքը կամ «Սկևռայի մեծ Կանոնգիրքը» (որից օգտվել է Գևորգ Սկևռացին Տոնացույցի իր տարբերակը կազմելիս) ունեցել է նույն կառուցվածքն, ինչ որ Ա խմբի ձեռագրերը: Ավելին այդ Կանոնագիրքը պատկանել է ձեռագրերի Ա խմբի ԾԸ (58) կանոնախմբերից բաղկացած խմբագրությանը:

6. Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի 57 կանոնախմբերին XV դարից (1416 թ.) հետո մինչև XVII դարն ավելացվել են Բարսեղ Կեսարացուն վերագրվող «Նորին կանոնք երրորդ Բարսղի Կեսարու հայրապետին արարեալ. Գլուխք Յէ», Յովհան Ոսկեբերանի անվամբ հայտնի «Յաղագս սահանի կանոնաց կարգաւորաց, որք գան խոստովանութիւն» կանոնախմբերը և Յակոբ Ղրիմեցու «Յաղագս պսակի անուսնացելոց» և «Յաղագս ազգականութեան» բնագրերը: Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի այս տարբերակը պահպանվել է ՄՄ 9488, 8158, 3706, 4403, 4631, 5782, 7317, 5894, 2883, 3099, 3097, 449, 3297, 3059, 3065 թվահամարի ձեռագրերում: Այստեղ վերոնշյալ կանոնախմբերն ավելացվել են առանց ընդհանուր և մասնավոր համարակալման: XVII դարում (մինչև 1651 թ.) Բարսեղ Կեսարացու, Յովհան Ոսկեբերանի և Յակոբ Ղրիմեցու նշված կանոնախմբերը՝ համապատասխան մասնավոր և ընդհանուր համարակալմամբ ընդգրկվել են «Կանոնագիրք Յայոց» ժողովածուի բովանդակության և առարկայական ցանկերում՝ բովանդակության ցանկում ստանալով ԾԸ (58), ԾԹ (59), Կ (60) հերթական համարները: Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի վերջնական այս խմբագրությունը ներկայացնում են ՄՄ 7580, 3291 թվահամարի գրչագրերը:

7. «Կանոնագիրք Յայոց» ժողովածուի՝ ձեռագրերի Ա խմբի՝ մինչև XI դարի կեսերն իրականացված խմբագրության իսկ (41) կանոնախմբերի հիման վերա 1056-1059 թթ. կազմավորվել է Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի սկզբնական տարբերակը: Խմբագիրը կամ խմբագիրները վերադասավորել և վերախմբավորել են Ա խմբի 41 կանոնախմբերն ըստ ժամանակագրական հաջորդականության և հեղինակային պատկանելության և հավելել ձեռագրերի Ա խմբում բացակայող «Սրբոյն Եղիշայի ի կանոնաց գրոց. Գլուխ մի» բնագիրը:

«Կանոնագիրք Յայոց» ժողովածուն Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի սկզբնական տարբերակում ընդգրկել է 43 կանոնախմբեր, սակայն ցանկը բաղկացած է եղել 40 կանոնախմբերի խորագրերից՝ ցանկում ձեռագրերի Ա խմբում առկա «Կանոն Եղիշէի վարդապետին. Գլուխ Ա», ինչպես նաև Սահակ Պարթևի «Գիր ավանդության» և Յովհաննես Մանդակունու «Բան կանոնական» կանոնախմբերի խորագրերի սղման և Բարսեղ Կեսարացու «Կանոնք Բասղի առ Ամփիւղոքոս. Գլուխք ԾԱ» կանոնախմբի տրոհման հետևանքով:

8. XIII դարի կիլիկյան նշանավոր մատենագիր, բաղաբանական և եկեղեցական գործիչ Գևորգ վարդապետ Սկևռացին Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի շրջանակներում իրականացրել է «Կանոնագիրք Յայոց» ժողովածուի հերթական խմբագրությունը: Նա վերահամարակալել է Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի նախնական տարբերակի կանոնախմբերը, Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբի ԾԸ (58) կանոնախմբերից բաղկացած տարբերակից լրացրել է ձեռագրերի Բ խմբում բացակայող կանոնախմբերը՝ վերահասավորելով դրանք ըստ հեղինակային և բովանդակային առանձնահատկությունների, հավելել է իսկ (իր խմբագրության արդյունքում արդեն իսկ)-ՅԸ (41-78) կանոնախմբերը, վերածել ժողովածուի առարկայական ցանկը՝

նախնական տարբերակի խորագրերը վերադասավորելով ըստ թեմատիկ առանձնահատկության, նաև հավելել նոր վերնագրեր:

Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի Գևորգ Սկևռացու իրականացրած խմբագրությունն են ներկայացնում ՄՄ 7615, 10137, 8964 և 2676 թվահամարի գրչագրերը:

9. Մովսես Երզնկացու և Գևորգ Սկևռացու անանուն վարքագրի վկայությունների համաձայն Գևորգ Սկևռացին հեղինակել է նաև կանոններ «վասն խոստովանութեան և վարուց յաւգուտ տգիտաց քահանայից»: Կանոնական այդ երկը Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբում պահպանված «Կանոնք զգուշաւոր քահանայից» բնագիրն է, որ «Կանոնագիրք Յայոց» ժողովածուում բաժանված է երեք առանձին մասերի՝ «Կանոնք զգուշաւոր քահանայից», «Ձգուշութեամբ սպասաւորելոյ Սուրբ խորհրդոյն» և «Վասն քահանայագործութեան կարգաց պատրաստութիւնն»:

10. «Կանոնագիրք Յայոց» ժողովածուի՝ Գևորգ Սկևռացու խմբագրած տարբերակը հետագայում մինչև XVII դար, սրբագրվել է և ենթարկվել մի շարք փոփոխությունների: Կատարված սրբագրական աշխատանքների ընթացքում անհայտ սրբագրողը կամ սրբագրողները վերահամարակալել են «Կանոնագիրք Յայոց» ժողովածուի ԶԸ (78) կանոնախմբերի կանոնները, մինչ այդ ցանկ չունեցող կանոնախմբերին ավելացրել են ցանկեր, իսկ արդեն առկա ցանկերը վերասրբագրել են, վերածնել են նաև առարկայական ցանկը՝ առավել կատարելագործելով «Կանոնագիրք Յայոց» ժողովածուն և դյուրացնելով դրա կիրառությունը: Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի այս սրբագրությունն իրականացվել է մինչև 1643 թվականը: Նշված փոփոխություններն արտացոլված են Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի հետևյալ՝ ՄՄ 10682, 654, 2677, 3544, 3098, 10953 գրչագրերում:

1643 թ. (համաձայն ՄՄ 10682 թվահամարի գրչագրի հիշատակարանի տեղեկությունների) Ներսես վարդապետն իր աշակերտների՝ Գակոբ և Ալեքսան կուսակրոն քահանաների, Խաչատուր սարկավագի և ձեռագրի գրիչ Դովհաննես դարի հետ սրբագրել և վերակազմել է Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի այս ենթախմբի առարկայական ցանկը՝ առավել ընդարձակելով այն: Առարկայական վերոնշյալ ցանկն առաջինի հետ միասին առկա է այս ենթախմբի ՄՄ 10682 և 10953 թվահամարի ձեռագրերում:

11. Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի ԶԸ (78) կանոնախմբերին XIV դարից XVII դարն (մինչև 1643 թ.) ընկած ժամանակահատվածում կցվել են Ներսես Շնորհալու «Վասն աստիճանաց ազգականութեան», Գակոբ Դրինեցու «Յաղագս պսակի» և «Յաղագս ազգականութեան» բնագրերը (ըստ ՄՄ 654 ձեռագրի): Այս երկերն ընդհանուր և մասնավոր համարակալում չեն ստացել և բովանդակության ու առարկայական ցանկերում չեն ընդգրկվել (գոնե մեզ ծանոթ ձեռագրերում): Չնայած այս հանգամանքին՝ Գակոբ Դրինեցու երկերը ժամանակին մեծ հեղինակություն են վայելել և ընդգրկվել են գրեթե բոլոր ենթախմբերի ձեռագրերում:

12. XIV-XV դարերի նշանավոր մատենագիր, ուսուցչապետ Գևորգ վարդապետ Երզնկացին XIV դարում (մինչև 1392 թ.) ընդամենն ընդօրինակել է մի ձեռագիր Կանոնագիրք՝ օգտվելով ձեռագրերի Բ խմբի՝ արդեն իսկ գոյություն ունեցող երկու ենթախմբերի՝ սկզբնական (տես ՄՄ, ձեռ. 656, 654) և Գևորգ Սկևռացու խմբագրած (տես ՄՄ, ձեռ. 7615, 8964, 2676, 10137) գրչագրերից: Ընդօրինակության ժամանակ սրանց (իր ձեռքի տակ եղած օրինակների) արհեստական միավորումից էլ ստացել է ձեռագիր Կանոնագրքի իր տարբերակը՝ կառուցվածքային ու բովանդակային որևէ փոփոխության չենթարկելով «Կանոնագիրք Յայոց» ժողովածուն: Հետագայում Գևորգ Երզնկացու Կանոնագրքի բազմաթիվ ընդօրինակությունների հետևանքով առաջացել է Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի «երզնկացիական» ենթախումբը, որ ներկայացնում են Անկյուրիայի թիվ 43, 42, ՄՄ 10311, 3368, 8938, 660, 9769, 9513, 3788 թվահամարի գրչագրերը:

13. XVII դարի հեղինակ Ազարիա Սասնեցին ոչ թե խմբագրել է «Կանոնագիրք Յայոց» ժողովածուն, այլ ուղղակի մեկտեղել է իրեն հետաքրքրող բնագրերը մեկ ձեռագրում և ստեղծել կանոնա-իրավական մի հավաքածու, որի բաղկացուցիչ մասն է եղել նաև «Կանոնագիրք Յայոց»-ը՝ Գևորգ Երզնկացու ընդօրինակության մի տարբերակով:

14. 1800 թ. Հակոբ դպիր Ամասիացին Կանոնագիրք ձեռագրերի տարբեր խմբերի և ենթախմբերի գրչագրերի բաղդատման արդյունքում կազմել է Կանոնագրքի ուղեցուցային մի օրինակ՝ օգտվելով ոչ միայն Կանոնագիրք ձեռագրերի Ա և Բ խմբերի տարբեր խմբագրությունների օրինակներից, այլ նաև ՄՄ 651 թվահամարի ձեռագրին հարող մի Կանոնագրքից:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

1. Վարդանյան Ն., Սկևռայի մեծ Կանոնագիրքը և դրա պատկանելությունը Կանոնագիրք ձեռագրերի Ա խմբին, «Կանթեղ» գիտական հոդվածներ, Երևան, 2014 թ., 1 (58), էջ 101-115:
2. Վարդանյան Ն., Կանոնագիրք ձեռագրերի Բ խմբի կազմավորումն ու հետագա խմբագրությունը 78 կանոնախմբերի սահմաններում, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2014 թ., 2 (196), էջ 130-139:
3. Վարդանյան Ն., Գևորգ Երզնկացին և «Կանոնագիրք Յայոց» ժողովածուն, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 2015 թ., 2 (17), էջ 50-60:

Нарине Варданян

Формирование и история развития сборника «Армянская книга канонов»

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 25.00.01 “Теория и история религии (религиоведение)”

Защита состоится 24 декабря 2015 г., в 14:00 на заседании специализированного совета ВАК Богословии 068 при Ереванском государственном университете (Ереван 0025, Абовяна 52, ЕГУ, 6-ой корпус).

РЕЗЮМЕ

Данная работа посвящена всестороннему изучению формирования и истории развития уникального памятника армянского церковного права, сборника «Армянская книга канонов».

Диссертация состоит из введения, двух глав, заключения, списка использованных источников и литературы (152 с.), приложения (20 с.). На основании обнаруженных новых фактов и анализа существующих исследований, первая глава представляет формирование сборника «Армянской книги канонов» (VIII в.) и его дальнейшее расширение в рамках рукописной группы «А» Книги канонов (до XVII в.). Во второй главе, в результате всестороннего изучения рукописного материала по-новому представлены появление рукописной группы «Б» Книги канонов (1056-1059 гг.) и история его развития (до XVII в.).

«Армянская книга канонов» была составлена Католикосом Ованесом Имастасером Озднеци (католикос 717-728 гг.) в VIII веке (по свидетельству Самвела Анеци – в 721 или 723 гг.) перередактированием и перекраиванием применяемого до тех пор сборника или сборников канонов. Затем, в результате редактирования, сделанных после второй половины VIII в., «Армянская книга канонов» была расширена, включая все новые каноны, и уже в первой половине XI века (до 1056-1059 гг.) состояла из 41 канонических групп. Очередное редактирование рукописной группы «А» Книги канонов имело место после 1056-1059 гг. и до 1098 г., когда неизвестный редактор или редакторы добавили в «Армянскую книгу канонов» канонические группы 42-57. Во время редактирований, осуществленных в период с конца XI века (после 1098 г) до второй половины XII века, неизвестный редактор или редакторы после 57-ой канонической группы рукописной группы «А» Книги канонов добавили «Каноны Его Святейшества Симеона, Католикоса Кавказской Албании», включая их в измененные ими же оглавление содержания и предметные списки. К этой редакции рукописной группы «А» Книги канонов принадлежала и Книга канонов Нерсеса Ламбронаци или «Большая книга канонов Скевры», из которой Геворг Скевраци (или Ламбронаци, 1245-1301 гг.) взaimствовал многочисленные цитаты в составленном им варианте Церковного Календаря.

После XV века (1416 г.) и до XVII века (до 1651 г.) к 57 каноническим группам рукописной группы «А» Книги канонов были добавлены тексты «Третьего канона, созданного патриархом Василием Кесарийским. 66 глав», приписываемые Василию Кесарийскому, группа канонов известная под именем Иоанна Златоуста «Об определении канонов, по которым священники каются», а также «Об обряде бракосочетания» и «О родстве» Акопа Крымца, которые были включены в содержание и предметные списки с соответствующей общей и частной нумерацией.

Рукописная группа «Б» Армянской книги канонов сформировалась в 1056-1059 гг. на основании 41 канонических групп рукописной традиции «А». Редактор или редакторы переставили и перегруппировали эти канонические группы и добавили к ним каноническую группу «Из канонов Святого Египта. Одна глава». В дальнейшем знаменитый автор, политический и церковный деятель Геворг вардапет Скевраци осуществил в рамках рукописной группы «Б» Книги канонов очередную редакцию «Армянской книги канонов».

По свидетельству Мовсеса Ерзынкаци и анонимного автора жития Геворга Скевраци (1245-1301 гг.), последний был также автором канонов «о признании и поведении в пользу невежественных священников». Этот канонический труд тот же текст «Канонов об осторожных священниках», сохранившийся в рукописной группе «Б».

Вариант сборника «Армянская книга канонов», отредактированный Геворгом Скевраци, впоследствии, до XVII века (до 1643 г.) корректировался и подвергся целому ряду изменений.

В период с XIV века и до XVII века (до 1643 г.) к 78 каноническим группам были добавлены тексты «О степенях родства» Нерсеса Шнорали (Благодатного), «О бракосочетании» и «О родстве» Акопа Крымца (согласно рукописи Мат. 654), без общей и частной нумерации.

Осуществленные исследования позволили выяснить также, что знаменитый ученый Геворг Ерзынкаци (1350?-1416 гг.) и автор XVII века Азария Саснеци никак не участвовали в редактировании сборника «Армянская книга канонов».

В XIV веке (до 1392 г.) Геворгом Ерзынкаци был создан только один список Книги канонов, сочетая находящиеся у него под рукой рукописи двух подгрупп рукописной группы «Б». А Азария Саснеци просто собрал интересующие его тексты в одну рукопись и создал канонически-правовой сборник, составной частью которого явился также вариант «Армянской книги канонов», переписанный Геворгом Ерзынкаци.

Сформировавшийся в VIII веке и пройдя почти девятивековой путь развития, сборник «Армянская книга канонов», находился в употреблении с момента своего формирования, регулируя духовно-церковные, ритуальные, богословские, экономические, семейно-брачные и другие вопросы Армянской Апостольской Церкви.

Narine Vardanyan

The Miscellany Armenian Book of Canons, its Formation and Evolution History

Dissertation for the Doctor of History on the specialization of “Theory and History of Religion (Religion studies)” 25.00.01.

The defense of the dissertation will be held on 24 December, 2015, at 14:00, in the session of Specialized Council 068 on Theology of SQC RA at the Yerevan State University (0025, Abovyan 52, YSU, 6th building).

SUMMARY

This study is devoted to the formation and evolution history of a unique work of Armenian Church right, the Miscellany *Armenian Book of Canons*.

The thesis is composed of an Introduction, two Chapters, Conclusion, List of utilized sources and literature (152 p.), and Appendix (20 p.). On the grounds of discovered new facts and the analysis of existing investigations, the first Chapter presents the formation of the Miscellany *Armenian Book of Canons* (8th century) and its further evolution in the frame of the manuscript group ‘A’ of the Book of Canons (until the 17th century). In the second Chapter, as a result of comprehensive investigation of manuscripts, the appearance of the manuscript group ‘B’ of the Book of Canons (1056-1059) and the history of its evolution are presented with a new approach (until the 17th century).

The *Armenian Book of Canons* was composed by Hovhannes Imastaser Odznetsi (catholicos 717-728), in the 8th century (according to Samvel Anetsi: in 721 or 723) by the reediting and the arranging the canon miscellany or miscellanies being in force before. Then, as a result of many times editing after the second half of the 8th century, the *Armenian Book of Canons* was enlarged, including many new canons, and already in the first half of the 11th century (before 1056-1059) it included 41 canonic groups. The next editing of the manuscript group ‘A’ of the Book of Canons took place after 1056-1059 until 1098, when unknown editor or editors added the canonic groups 42-57 to the *Armenian Book of Canons*.

During editing works done in the period from the end of the 11th century (after 1098) until the second half of the 12th century, unknown editor or editors added after the the 57 canonic groups of manuscript group ‘A’ of the Book of Canons *The Canons of His Holiness Simeon, Catholicos of Caucasian Albania*, including them in the modified by themselves Contents and subject lists. The *Book of Canons of Nerses Lambronatsi or Great Book of Canons of Skevra*, from which Gevorg Skevratsi (or Lambronatsi, 1245-1301) borrowed numerous quotations while composing his variant of the Church Calendar, pertains to this edition of the manuscript group ‘A’ of the Book of Canons.

After the 15th century (after 1416) and until the 17th century (before 1651), canon groups entitled *Third Canon Created by Patriarch Basil of Caesarea - 66 Chapters*, *About the Definition of Canons according to which Priests Repent*, attributed to John Chrysostom, as well as the text *About the Rite of Marriage* and *About Kinship* by Hacob Ghrimetsi, were added to the 57 canonic groups of the manuscript group 'A' and were included in the Contents and the subject lists of the *Armenian Book of Canons* with corresponding general and particular numeration.

The manuscript group 'B' of the Book of Canons was formed in 1056-1059 on the basis of the 41 canonic groups of the manuscript tradition 'A'. The editor or editors rearranged and regrouped these canonic groups and added to them the canonic group *From the Canons of Saint Eghishe-One Chapter*. Later the well-known author, political and Church figure of Cilician Armenia Gevorg vardapet Skevratsi (1245-1301) achieved the next edition of the *Armenian Book of Canons* in the frame of the manuscript group 'B' of the Book of Canons.

According to the evidence given by Movses Yerzykatsi and the Anonymous author of the *Life of Gevorg Skevratsi*, the latter was also the author of *Canons about Confession and Behavior to Use by Ignorant Priests*. This canonic work is the same text as *Canons about Prudent Priests* preserved in the manuscript group 'B'.

Later, until the 17th century (before 1643), the variant of the *Armenian Book of Canons* edited by Gevorg Skevratsi was corrected and underwent a series of modifications.

During the period from the 14th century to the 17th century (before 1643) the texts *About the Degrees of Kinship* by Nerses Shnorhali (the Gracious), *About Marriage* and *About Kinship* by Hacob Ghrimetsi were added to the 78 canonic groups without general and particular numeration (according to M. 654).

In the 17th century, as a result of these works of editing, the *Armenian Book of Canons* was brought to its definitive aspect in the frame of the manuscript groups 'A' and 'B' of the Book of Canons.

The realized investigations also allowed elucidating that well-known scholar Gevorg Yerzykatsi (1350?-1416) and Azaria Sasnetsi, author of the 17th century, had no participation in the editing of the miscellany *Armenian Book of Canons*.

In the 14th century (before 1392) Gevorg Yerzykatsi created only one copy of the Book of Canons, combining manuscripts of the two subgroups of the manuscript group 'B' being at his disposal. But Azaria Sasnetsi simply gathered texts interesting him in one manuscript and created a canonic right miscellany in which he also integrated the variant of the *Armenian Book of Canons* copied by Gevorg Yerzykatsi.

Composed in the 8th century and passing through an evolution of nine centuries, the miscellany *Armenian Book of Canons* was used from the moment of its formation, regulating spiritual, Church, ritual, theological, economical, family and marriage, as well as many other issues of the Armenian Apostolic Church.